ՏԵՂԵԿԱՆՔ
2011 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Միջոցառումների անվանումները	Միջոցառումների կատարման արդյունքները
1	2	3	4
ՀՀ արդարադատության նախարարություն	109.	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի 109-րդ կետով նախատեսված խոշտանգման հանցակազմի՝ միջազգային կոնվենցիաներին համապատասխանեցման նպատակով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն են ներկայացվել «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը: **Օրինագծերի փաթեթը ՀՀ Ազգային ժողովի կողմից 2011 թվականի հոկտեմբերի 24-ին ընդգրկվել է չորսօրյա նիստերի օրակարգ:**
ՀՀ արդարադատության նախարարություն	110.	«Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու	Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի 110-րդ կետով նախատեսված «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման

		մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	նախագիծը մշակվել և ներկայացվել է շահագրգիռ մարմիններին՝ կարծիք ստանալու նպատակով: Օրինագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 2-ի նիստում և սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ Ազգային ժողով: **«Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է 2011 թվականի դեկտեմբերի 8-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ:**
ՀՀ արդարադատության նախարարություն	111.	«Հավաքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից մշակվել և 2011 թվականի փետրվարի 3-ից շրջանառության մեջ է դրվել «Հավաքների ազատության մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Զինվորական ծառայություն անցնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Խղճի ազատության և

			կրոնական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» Հայաստանի Հանրապետության փոփոխություն կատարելու մասին», «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում

			փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Ոստիկանության զորքերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը: Օրինագծերի փաթեթը 2011 թվականի ապրիլի 11-ին Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից ընդունվել են երկրորդ ընթերցմամբ, իսկ 2011 թվականի ապրիլի 12-ին օրենքները Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից ընդունվել են 3-րդ ընթերցմամբ: **«Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2011 թվականի ապրիլի 14-ին /ՀՕ-72-Ն/**:
ՀՀ արդարադատության նախարարություն	112.	«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ կառավարության 2011 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի 112-րդ կետով նախատեսված միջոցառման շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել են «Խղճի և կրոնական ազատությունների մասին», «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը, որոնք ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2011 թվականի հունիսի 13-ի թիվ 01/3520-11 գրությամբ ուղարկվել են շահագրգիռ մարմիններին կարծիք և համապատասխան բնագավառների կարգավորման ազդեցության գնահատման եզրակացություններ ստանալու նպատակով: Նշված մարմինների առաջարկությունները և եզրակացությունները ստանալուց և նախագիծը լրամշակելուց հետո **նախագիծը 2011 թվականի հունիսի 29-ին ներկայացվել է ՀՀ կառավարություն**: **ՀՀ արդարադատության նախարարության կողմից կազմակերպվել է նաև**

			հանրային քննարկումներ, մասնավորապես՝ նախագծերը տեղադրվել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ինտերնետային պաշտոնական կայք էջում և սույն թվականի օգոստոսի 19-ին ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ «Կոնգրես» հյուրանոցում կազմակերպվել է վերոհիշյալ նախագծերի փաթեթի հանրային քննարկումը: Հանրային քննարկումներից հետո Նախագծերի փաթեթը ներկայացվել է Վենետիկի հանձնաժողով՝ փորձաքննության, որի կողմից օրենսդրական փաթեթը գնահատվել է որպես առաջընթաց քայլ և ներկայացվել են որոշակի առաջարկներ՝ լրամշակման նպատակով: Առկա է նախնական պայմանավորվածություն Վենետիկի հանձնաժողովի հետ՝ նշված փաթեթի քննարկումը կազմակերպել 2012 թվականի ամռանը:
ՀՀ արդարադատության նախարարություն	113.	«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ կառավարության 2011 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի 113-րդ կետով նախատեսված միջոցառման շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2011 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 5946-11 գրությամբ ուղարկվել է շահագրգիռ մարմիններին կարծիք և համապատասխան բնագավառների կարգավորման ազդեցության գնահատման եզրակացություններ ստանալու նպատակով: Նշված մարմինների առաջարկություններն ու եզրակացությունները ստանալուց հետո նախագիծը 2011 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 01/6121-11 գրությամբ ուղարկվել է ՀՀ կառավարություն: ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 02/16.6/16072-11 հանձնարարականով նախատեսվել է նախագիծը ներկայացվել ՀՀ կառավարություն շահագրգիռ մարմինների կարծիքների ամփոփումից հետո: Վերջնաժամկետ նախատեսված է եղել 2011 թվականի հոկտեմբերի 24-ը: **Շահագրգիռ մարմինների կարծիքների**

			ամփոփումից հետո 2011 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 01/6672-11 գրությամբ նախագիծը ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներկայացվել է ՀՀ կառավարություն: ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 2/11573-11 հանձնարականով նախատեսվել է նախագիծը համապատասխանեցնել շահագրգիռ մարմինների կարծիքների հետ: Վերջնաժամկետ նախատեսվել է 2011 թվականի նոյեմբերի 16-ը: ՀՀ արդարադատության նախարարության 2011 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 01/7322-11 գրությամբ նախագիծը ներկայացվել է ՀՀ կառավարություն: ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 02/16.5/19887-11 հանձնարարականով նախատեսվել է նախագիծը ևս մեկ անգամ քննարկել շահագրգիռ մարմինների հետ: Վերջնաժամկետ նախատեսվել է 2011 թվականի դեկտեմբերի 21-ը: ՀՀ արդարադատության նախարարության 2011 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 01/8175-11 գրությամբ առաջարկվել է երկարացնել հանձնարարականի ժամկետը մինչև 2012 թվականի հունվարի 20-ը, որին ի պատասխան ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 02/16.5/20529-11 հանձնարարականով կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2012 թվականի հունվարի 30-ը:
ՀՀ արդարադատության նախարարություն	114.	«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ կառավարության 2011 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի 114-րդ կետով նախատեսված միջոցառման շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2011 թվականի նոյեմբերի 15-ի թիվ **7291-11 գրությամբ ներկայացվել է շահագրգիռ մարմիններին՝ կարծիք և համապատասխան կարգավորման ազդեցության գնահատման եզրակացություններ ստանալու նպատակով: Այնուհետև, նախագիծը ՀՀ արդարադատության նախարարության 2011 թվականի նոյեմբերի 30-ին թիվ 01/7660-11 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարության**

			քննարկմանը, որից հետո նոր հանձնարարական է տրվել ՀՀ կառավարության կողմից ևս մեկ անգամ համաձայնեցնել շահագրգիռ մարմինների հետ: Նախագիծը 2011 թվականի դեկտեմբերի 28-ին ներկայացված է ՀՀ կառավարության քննարկմանը:
ՀՀ արդարադատության նախարարություն	115.	«Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ՀՀ կառավարության 2011 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի 115-րդ կետով նախատեսված միջոցառման շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումներին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որը ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2011 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 01/7738-11 գրությամբ ներկայացվել է շահագրգիռ մարմիններին կարծիք և համապատասխան կարգավորման ազդեցության գնահատման եզրակացություններ ստանալու նպատակով: Համապատասխան կարծիքները ստանալուց և ամփոփելուց հետո նախագիծը **ՀՀ կառավարություն է ներկայացվել 2011 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 01/8421-11 գրությամբ:**
ՀՀ արդարադատության նախարարություն	116.	«Նոտարիատի բնագավառում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման հայեցակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարութուն ներկայացնելը	ՀՀ կառավարության 2011 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի 116-րդ կետով նախատեսված միջոցառման շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Նոտարիատի բնագավառում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որը ՀՀ արդարադատության նախարարության կողմից **2011 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 01/8531-11 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն:**

ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ			
Պատասխանատու մարմինը	Ծրագրի կետը	Գերակա խնդիրները	Գերակա խնդիրների կատարմանն ուղղված քայլերը
1	2	3	4
ՀՀ արդարադատության նախարարություն	58.	ՀՀ օրենսդրության վերլուծություն և կատարելագործում, ՀՀ-ում գործող օրենսդրության մեջ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիային, ՀՀ Սահմանադրությանը, օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող իրավական ակտերի վերացում	ՀՀ օրենսդրության վերլուծության և կատարելագործման, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպային կոնվենցիային, ՀՀ Սահմանադրությանը, օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող իրավական ակտերի վերացման նպատակով ուսումնասիրվել են տարբեր հարաբերություններ կարգավորող մի շարք իրավական ակտեր: Նշված խնդիրը կարգավորելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարությունը ձեռնամուխ է եղել իրավական ակտերի մի շարք նախագծերի մշակմանը, մասնավորապես՝ 1990-1995 թվականներին ընդունված օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծերը: Արդեն իսկ մշակված և շրջանառության մեջ են դրվել **23 օրենքների նախագծեր:**
ՀՀ արդարադատության նախարարություն	59.	Մարդու իրավունքներին առնչվող միջազգային փաստաթղթերին լիարժեք համահունչ քրեական դատավարության օրենսդրության համալիր բարելավում	Մարդու իրավունքներին առնչվող միջազգային փաստաթղթերին լիարժեք համահունչ քրեական դատավարության օրենսդրության համալիր բարելավման նպատակով մշակվել է «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգին հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որը ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2011 թվականի մարտի 2-ի թիվ 01/1175-11 գրությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն: ՀՀ կառավարության կողմից 2011 թվականի մարտի 12-ի թիվ 2/2311-11 գրությամբ ստացված 2011 թվականի մարտի 12-ի 02/16.6/3489-11 թվակիր հանձնարարականի համաձայն անհրաժեշտություն է առաջացել

			նախագիծը քննարկել ՀՀ կառավարության 10.03.2011թ. նիստի արձանագրության համաձայն: Վերջնական տարբերակը և հայեցակարգի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության առաջարկությունների հետ մեկտեղ ՀՀ կառավարություն է ներկայացվել 2011 թվականի մարտի 14-ի թիվ 01/1465-11 գրությամբ, որն ընդունվել է **ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 10-ի թիվ 9 արձանագրային որոշմամբ:**
ՀՀ արդարադատության նախարարություն	60.	Արդարադատության ոլորտում մատչելիության սկզբունքի գործնական հիմքերի բարելավման նկատառումով «DataLex» ծրագրի հնարավորությունների զարգացում՝ հատկապես, համակարգչային եղանակով հայցեր հարուցելու, բողոքներ բերելու ինստիտուտ ներդնելու տեսքով	2011 թվականին շահագործման է դրվել «Դատալեքս» տեղեկատվական համակարգի ինտերնետային կայքը /www.datalex.am/, ինչը հանդիսացավ լուրջ տեղեկատվական բազա դատական համակարգում առաջացող խնդիրների լուծման համար: Մասնավորապես, «Դատալեքս» համակարգը հնարավորություն ընձեռեց առցանց /online/ որոնել դատական գործեր, տեղեկանալ նիստերի ժամանակացույցին, որոնել որոշակի կոնկրետ գործի համար նմանատիպ համարվող գործեր, ՀՀ օրենքներ, առցանց ուղարկել դիմումներ և կատարել վճարումներ:
ՀՀ արդարադատության նախարարություն	61.	Համաշխարհային բանկի խմբի «Գործարարությամբ զբաղվելը» /Doing Business/ վարկանիշային դասակարգման սանդղակում Հայաստանի դիրքի էական բարելավում	1. Համաշխարհային բանկի խմբի «Գործարարությամբ զբաղվելը» /Doing Business/ վարկանիշային դասակարգման սանդղակում «Ընկերության հիմնադրում» բաղադրիչով Հայաստանի դիրքի բարելավման ապահովման նպատակով մարտի 25-ին բացվել է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության վերանորոգված ժամանակակից պահանջներին բավարարող կենտրոնը: Ներդրվել է «Մեկ պատուհան» սկզբունքը, որի համաձայն իրավաբանական անձի գրանցումը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառումը, կատարվում է «Մեկ պատուհանից»: Պետական ռեգիստրի այս ստորաբաժանումը գրանցում է իրավաբանական անձը, ֆիրմային անվնումը, նույն տեղում տրամադրվում է նաև հարկ վճարողի հարկային կոդը: Սրան զուգահեռ, ներդրվել է նաև համացանցային գրանցումն ու համացանցի միջոցով փաստթաթղթերի նախնական մուտքագրումը: համաձայն որի,

			քաղաքացին այլևս ստիպված չէ ռեգիստրում գրանցվելու համար մի քանի դուռ թակել, հավաքել անհրաժեշտ տեղեկանքներն ու փաստաթղթերը: Արդյունքում՝ 1. իրավաբանական անձի գրանցումը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառումը կատարվում է «Մեկ պատուհանից», միաժամանակ հնարավորություն է տրվել պետական գրանցումն իրականացնել էլեկտրոնային եղենակով /e-registr.am/, որի տևողությունը 7-8 օրից հասցվել մինչև 15 րոպեի. 2. ընդունվել է «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների և մի շարք այլ իրավական ակտերի փաթեթը, որով հաստատվել է իրավաբանական անձանց միասնական գրանցամատյանից տեղեկանքներ ստանալու ձևերը, 3. ընդունվել է իրավաբանական անձանց պետական գրանցման մասին ձեռնարկը, որով մեկնաբանվել և պարզաբանվել է իրավաբանական անձի գրանցման գործընթացը, 4. ներդրվել է գրանցման գործընթացի ժամանակ իրավունքների իրականացման համար ոչ պարտադիր գործողությունների համար արտաբյուջետային վճարների համակարգը, 5. գործարկվել է «Ինտերնետով հրապարակային ծանուցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված ինտերնետային կայքը՝ պաշտոնական հրապարակումների նպատակով /azdarar.am/: 2. Համաշխարհային բանկի խմբի «Գործարարությամբ զբաղվելը» /Doing Business/ վարկանիշային դասակարգման սանդղակում «Պայմանագրերի կիրարկում» բաղադրիչով Հայաստանի դիրքի բարելավման ապահովման նպատակով մշակվել և շահագրգիռ

			մարմինների կարծիքները ու նախագծերի համապատասխան բնագավառների կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները ստանալուց հետո 2011 թվականի մարտի 29-ի թիվ 01/1904-11, 2011 թվականի մարտի 29-ի թիվ 01/1902-11 և 2011 թվականի մարտի 29-ի թիվ 01/1900-11 գրություններով ՀՀ կառավարություն են ներկայացվել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը: **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները ՀՀ Ազգային ժողովի կողմից 2011 թվականի մայիսի 25-ին ընդունվել են երկրորդ ընթերցմամբ:**